Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99-82 8
87
1-2

ԱՐՇԱԼՈՒՅՍ

Գրական, Գեղարուեստական եւ Քննադատական

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Խմբագրեց՝

Երուանդ Սաղոյեան

ԹԻՖԼԻՍ

Տպարան «ԷՊՕԽԱՅ» մուտ. պեր № 8.

1915 թ.

ԳԻՐՔ I

2000

JUN 2010

Կոչ-Ոտոյեր-Գեղագիտական դպրոցական
Հայոց ցեղասպանի և Արևմտահայերի

91.99-82
Ա-92

ԱՐՇԱԼՈՅՍ

Գրական, Գեղարուեստական
եւ Քննադատական

ԺՈՂՈՎԱԾՈՒ.

Գիրք I.

Ազգային Գրադարան

Խմբագրեց

Երուանդ Սաղոյեան

ԹԻՖԼԻՍ

Տպարան „Էպոխա“ Մաւզ. փ. № 8.

1915

ԱԳ-34

(4564)

6905 Ahh

59 3

ՀԱՅՐԵՆԻՔԻՍ

Էլ չեմ՝ երգի սուգ ու տանջանք, հայրենի՛ք,
Հառաչանքդ անցած արիւն օրերի,
Որ քո սրտում չլդրոշմուի սեւ կնիք,
Վշտի կնիք, մի նոր գալիք ցաւերի...։

—

Վերածնուի՛ր, թէեւ շուրջդ կիսաւե՛ր,
Բայց ամպերը չկան գլխիդ կուտակուած.
Քեզ են գալիս, օ՜, տեսնո՞ւմ ես այն խմբեր՝
Որդիքդ են քո հեռուից գալիս կարօտա՜ծ...։

—

Վերցրո՛ւ քողը քո սգաւոր աչքերէն,
Արշալո՛յսի շողքերն ընկան Մասիսին.
Քո որդիքդ արցունքներըդ կըսրբէն,
Կը զարդարեն քեզ վարդերով մայիսին։

—

Վերածնուի՛ր սի՛րտ աւր նորից ու հրճուի՛ր,
Մենք պիտ՝ ապրի՛նք, պիտի ապրինք քո գրկում.
Ապարէզդ բաց է, էլ մի՛ ընկճուիր,
Վերածնուի՛ր, կանգնի՛ր կեանքի նոր շէմքում...։

—

Ու ժպտա՛ մեզ ժպտա՛ մի նոր ժըպիտով,
Ինչպէս մայրը իւր հարազատ զաւակին.
Կ՚ուզենք ապրե՛լ քեզ հետ ոսկէ՛ յոյսերով,
Ու մոռանալ մեր անցեալը ցաւագին...։

—

Էլ չեմ՝ երգի սուգ ու տանջանք հայրենիք,
Հառաչա՛նքդ անցած արիւն օրերի,
Որ քո սրտում չըդրոշմուի սեւ կնիք,
Վշտի կնիք, մի նոր գալիք ցաւերի...։

Դագիկ Մխիթարեան.

Ռոստով Դ||վ։

ԱՆՑԵԱԼ ՅՈՒՇԵՐԻՑ

(Նուէր օր. Ռ-ին)

Գարուն էր. կեանքիս գարունն էր։

Առաջ էի լողում անյայտութեան գրկում, որոնումների ծովում։ Կեանքի ովկիանուն էի, և կեանքն իմ մէջն էր։

Ներսս մի ամբողջ ովկիան էր փոթորկում։ Հոգիս ինչ որ հէքիաթական թևերով հեռուներն էր սլանում՝ դէպի վեր, դէպի մի հէքիաթական աշխարհ, ուր միայն ծաղիկների բոյրը, թռչունների դայլայլը և երջանկութիւնն է տիրում։ Նա սէր էր որոնում, մի վսեմ սէր, և անվերջ թափառում էր, փոթորկում։

Ես շատ էի սիրում ծովը

Որքան հրաշալի է այդ, որքան, խոր, անծայրածիր. ժամերով խորասուզվուած նրա անհուն յատակը, դիտում էի պայծառ աստղերի արտացոլումը, խօլ ալիքների պարը, լսում էի քամու փսփսուկը։

Այդ ժամերին մոռացած ամեն ինչ, ես ինձ՝ ձուլուած էի զգում անհունութեան հետ և ապրում անվերջ .. Ա՜խ, որքամ լաւ էին այդ ժամերը, բայց և որքան տանջալից...։

Այդ ժամերին ես երազում էի՛ յոգնած և մտատանջ գլուխս դնել մի կրծքի վրայ, որ ծովի անհունութիւնն ունենար և աստղերի պայծառութիւնը։

Եւ անվերջ որոնում էի այդ սիրտը, երազում, ստեղծում...

Ու խոր երազներիցս արթնանալով, սև քօղով պատած տուն էի վերադառնում։

Եւ այսպէս ամեն օր։

Կիրակի էր։ Կրկին եկայ ծովափ։

Այս անգամ ծովն աւելի գեղեցիկ էր թվում, աւելի խո՛ր, անծայրածի՛ր...։

Ոսկեշող Արեգն իջել էր անհունութեան գիրկը և ալիքներին փարուած՝ ժպտադէմ առաջ էի լողում ..։

Ո՜րքան գրաւիչ ու նախանձելի էր բնութիւնն իր գեղեցկութեամբ ու անդորրութեամբ և որքան փոթորկալից էր նրա հանդէպ հոգիս։ Զգիտեմ, որքան ժամանակ կը լինէր ինչ խորասուզուել էի երազներիս մէջ, երբ գլուխս բարձրացրի—Աստուած իմ այն ի՞նչ էր դիմացս մի կատարեալ հրեշտակ էր կանգնած— բարձրահասակ, քնքուշ, գեղեցկադէմ։ Ճկուն իրանը ամբողջապէս սպիտակ քօղով էր պատած, գլուխը զարդարուն ոսկեհուր մազերով, որ կարծես մրցում էին նազանքներով ծփող ալիքների և Արեգի շողերի հետ...։

Ոսկեշող գանգուրների տակ երկու խորութիւններ էին նկատվում, լի մեղմ թախիծով։

Ո՜րքան քնքուշ, ջերմ ու շոյող էր այդ հայեացքը։

Սիրտս թնդաց, աչքերս քարացան և մնացին սևեռած

Յանկարծ նա շարժուեց և լոյսի պայծառ շողերով ողողուած անհունութեան վրայով իբրև մի շող եկաւ անցաւ մօտս, ու հեռացաւ։

Մի քանի վայրկեան ևս՝ և նա էլ չկար. ես կրկին մենակ էի խօլ մտքերիս, վառ երազներիս հետ։

Անցան տարիներ։ Բայց այդ երազս այլ ևս չկրկնուեց։

Ձմեռ էր։ Մի երեկոյ կրկին խորասուզուել էի ծովի անհունութիւնը Աստղերը նորից ցոլացին անհունութեան գրկում։ Ուղիղ հայեացքիս տակ, կապոյտ ովկիանում մի սպիտակ գունդ էր նկատւում որ հետզհետէ պարզուեց.. Ո՜, Տէր իմ այդ իմ պատկերս էր։ Հապա ի՞նչ էր այն սպիտակը գլխիս վրայ։ Ես սոսկացի, ձեռքս տարայ դէպի գլուխս և գանգուրներիցս պոկեցի մի փունջ։ Նրանք ճերմա՛կ էին, որ կէս ձիւն... Աստուած իմ այդ իմ կեանքիս ձմեռն էր։

Ձմեռ էր նաև շուրջս։

Բայց ներսս-հոգիս...

Օ՜, ո՛չ... նա կրկին հրավառ էր։ Նա կրկին ծովափ էր ձրգտում և որոնում այն սիրտը, որ ծովի խորութիւնն ու անսահմանութիւնն ունենայ և Արևի ջերմութիւնն ու պայծառութիւնը։

Արեօք կը գտնի՞։

Ժայռ.

Թիֆլիզ.

ՉԷ ՉԷ ՆԱ ՉԷՐ

Սեւ-սեւ աչէր...
Չէ՛ չէ՞ նա չէր.
Ինչո՞ւ պաՏրանք զգացի...
Սրտի բրիռ,
Սէր ու գրգիռ՝
Ինչո՞ւ նորէն զարթնեցին։

ՎաՀիս աչեր
ինձ կը կանչէր,
Սրտիս թախիծ փարատէր...
Չէ՛, չէ՛ նա չէր,
Որ կը կանչէր
Իմ սիրածս յարատեւ։

Տելեմաք Տէր Յարութիւնեան։

Թիֆլիզ.



ԻՄ ԱՍՏՈՒԱԾՈՒՀԻՆ

(Արաքսիային)

...Դու իմ աստուծուհին ես...

Այն օրը Ոլիմպոսի կատարը բոցավառուել էր երկնային հրով։ Աստուածները կուտակուած ամպերի միջից շանթեր էին արձակում, կայծակահարում էին գեղեցկութիւնը... Դեռ կրակը չէր հասել ոարալանջին, երբ ես թաւուտների միջից լսեցի մի խուլ հեծկլտոց.

—Ե՛կ, տար ինձ...

—Ո՞վ ես դու։

—Աստուածային ծնունդ...

—Դու յաւերժահարս ես...

—Դու մի ալք ես... Դու չքնաղ ես... Դու թագուհին ես գեղեցկութեան... Դու կեանք ես մարդ կոչուածների... Ա՜հ, գրկաբաց քեզ մօտ եմ գալիս իմ աստուածուհի, արի՛ մենք հովի թևերով թռչենք դէպի մրրկապատ ծովի ամպածուփ եթերը, սաւառնենք մրրիկներում, սաւառնենք հեռու աստուածների անյաղթ բարկութիւնից, երկրպագենք միմիայն Պոսէյդոնին և ապրենք նրա կապուտակ թևերի տակ...

Ն. Հայկազունի.

Թիֆլիզ

---

*
* *

(Նուէր Նասիբեանների)

Նոր օր է բացվում, ցայտ՛ր իմ եղբայր,
Թէպէտ մեր գլխին կրակ է ու բոց,
Բայց շուտով պիտի այն հեռուում պայծառ
Ցոլան շողերը գարնան ոսկեզօծ։
Դէ՛, յառա՛ջ, ե՛ղբայր, յառա՛ջ անվեհեր
Դէպ այն լուսածին հեռուն անձկալի.
Խորտակենք շուտով մեր կուռ շղթաներ
Ու դիմենք մի նոր եւ ազատ կեանքի։

*
* *

Ո՛վ դու, վիրաւոր, չարաչա՛նչ բամի,
Լալիս ես դարեր ցաւերով լցուած,
Բայց ոչ-ոք չկայ, որ երգդ լսի
Ու դարմանն անէ սրտիդ խոցուածն։
Եւ դու, իմ խեղճ ազգ բամու պէս անցեալն,
Հեծծում ես դարեր վիճակդ չարաչ,
Բայց ամբողջ աշխարհ անփոյթ է նայում
Ու դարման չկայ դարդիդ նոգեմաչ։

Ս. Ղալաչեան.

ԹԻՖԼԻՋ.

ԵԿՈՒՐ ՀՈՍ ԵԿՈՒՐ...

(Նուէր օրիորդ Դուսիկին).

*
* *

Եկուր հոս եկուր, այս ծիծղուն ծովակի ափին նստինք ու իրար հետ խօսինք, հոս միայն, այս խաղաղ վայրի կրծքին կըրնանք մեր կորուսեալ հանգիստը գտնել... Ականջէ, թէ ինչպէս ծովակին կայտառ կոհակները սէր կը մրմնջեն...։

*
* *

Այս ծովակի ծիծղուն ափին ղղնջանք իրար սիրոյ բառեր և անսանք անոր դիւրագրգիռ ալիքներու անուշ ելևէջներուն.. Զեփիւռը մեզի թող համբուրէ քնքշօրէն և տանելով մեզի իրեն արագաթռիչ թևերուն վրան դէպի հեռու անծանօթներ ու ամեն մէկին թող պատմէ՝ թէ ինչպէս գորովալիր կը սիրենք իրար... Ականջէ, թէ ինչպէս զեփիւռը սէր կը շնչէ...

*
* *

Եկուր, հոս եկուր, խորասուզուինք այս խաղաղ ջրերու խորքը, ուր գոյութեան պայքարն է, ուր կռիւը մահու դէմ կաշխատի անոր գոյութիւնը հերքել... Լսէ, թէ ինչպէս ջրերու յոյզքը տենդասարսուռ սէր էր յուզեն...

*
* *

Եկուր նստինք այս սաղարթափիտ ծառին տակ ու լսենք կարապին վերջին երգը... սակայն պէտք է որ մենք ալ երգենք մեր աստուածային սիրոյ անդրանիկ երգը... Հոտոտէ, թէ ինչպէս վառ ծաղկունք սէր կը բուրեն...

*
* *

Դիտէ փառապանծ լեռներու թագաւորութիւնը և տես թէ, ինչպէս անոնց կատարները կը լողան վճիտ ջրերուն մէջ՝ կարծեօք սիրահուն բուրալից ծոցին մէջ կը լողան... Լսէ, թէ ինչպէս արագահոս լեռնային առուակը սէր կը մրմնջէ...

*
* *

Եկուր, հոս եկուր, դիտէ լազուարթ երկնակամարը և ցոլաշող լուսինը, որ մեզի կ'ուզէ պատմել սիրոյ հեքիաթներ ու անթառամ պատմուածքներ... տես, թէ ինչպէս լուսինը պայծառ սէր կը ցայտէ..

Եկուր, հոս եկուր...

Յար. Յարութիւնեան.

Նար-Նախիջեւանն։

ԻՆՉՈՒ ԵՏ ՆԱՅԵՄ.

—

Հեռո՞ւ, անսահմա՞ն անհունի ծայրից
Արեգն է ժպտում սրտին յոյսերով,
Լազուր կապոյտի գաղտնալի գրկից
Անթիւ աչեր են ցոլում յոյզերով:

—

Ողջ էութիւնս դարձած հուր-հնոց,
Առաջ է սլանում շանթ որոտի պէս,
Սլանում է դէպ անյայտ եղեմ ծոց,
Ըմպելու հիւթը ծաղկունքից պէս-պէս։

—

Եւ իղձերս անվերջ անթիւ, անհամար,
Որպէս սրարշաւ կատաղի մի հողմ,
Առաջ են անցնում ճամբով ոսկեվառ,
Կենսածոր վարդեր ափում ամեն կողմ:

—

Անտես ու անյայտ ճամբիս բեւեռից
Արեգն է ժպտում յուսալից դէմքով,
Ամպշող երկնքի փիրուզեայ կրծքից
Աստղեր են ցոլում հոգուս քնքշանքով:

—

Ցոլացէ՛ք Աստղե՛ր թո՛ղ ձեզնով դիւթուեմ,
Սրտիս ծալքերը լցուին հուր բոցով.
Ի՞նչ կայ անցեալում, ինչո՞ւ ետ նայեմ,
Ուզում եմ սլանալ կեանքի հնոցով:

—

Էմիլիա Նազարեանց

Թիֆլիզ

ԱՂՕԹՈՂ ԹԱՄԱՐԸ

(ՊՕԷՄ).

Սիւնեաց լեռների գեղանի ծոցում,
Անդորը ու խաղաղ բարձր ամրոցում,
Նազելի դուստրը իր հօրը փարուած
Լսում էր հայոց պատմութիւնն անցած։
Պատմում էր հայրը Վասակի մասին,
Որ թագի համար ուրացաւ ազգին.
Նա յիշեց նաև այն քահանային,
Որ ոսկու փայլից վաճառեց Անին։
Իշխանը լռեց ու սրտի խորքում
Զգաց հայ ազգի կորուստն ողբալի.
Թամարը նայեց հօր մռայլ դէմքին,
Ուզեց փարատել վիշտը անմեկին
Փարուեց ալեզարդ ծերունու կրծքին
Ու համբուրելով ասաց իշխանին.
—Հայրիկ, տեսնում եմ այն իշխաններին,
Որ փառքի համար ուրացան ազգին,
Բայց նրանց հոգիքն ընկած խաւարում,
Ձեռները մեկնած՝ գութ են աղերսում։
Հայր ես սիրում եմ մարդկանց բոլորին,
Նոյնիսկ մարդասպան ոճրագործներին.
Երդվում եմ, հայրիկ, կը քաւեմ սիրով,
Նրանց յանցանքը իմ ջերմ աղօթքով։
Հայրը գորովով գրկեց Թամարին,
Սեղմեց դստերը իր յուզուած կրծքին.
—Ապրես, աղջիկս, դիմիր աղօթքին.
Դու լաւ ես խօսում, տայ Աստուած բարին։
Անցան տարիներ։ Ամրոցը նոյնն է,
Բայց այժմ նա չարութեան բոյն է.
Բռնակալ բէկը ամրոց է մտել,
Ծերուկ իշխանին տանջել, սպանել,
Իսկ իր կրօնին միշտ հաւատարիմ,
Սիրուն Թամարին կապել է ծառին,
Ու ստիպում է Իսլամն ընդունել
Կամ սպառնում է կրակով այրել։
Թամարը լուռ է։
Կարծես չի տեսնում բռնակալ բէկին.
Նա աչքերն յառած անհուն բարձրունքին
Լուռ աղօթում է։

Աղօթքն աւարտեց ու ասաց բէկին.
—Բէկ, չեմ ուրանալ հաւատն իմ ազգին.
Բորբոքիր կրակը, ես աղօթեցի,
Քո մեղքի համար ներում խնդրեցի։
Բէկը գունատուեց։
Իր մեղքի համար մի հայի աղջիկ
Ներում է խնդրել,
Որին հէնց այժմ նա պատրաստվում է
Կրակով այրել։
Ծառը վառուեց.
Թամարը անընդատ երկինք էր նայում,
Աստուած էր կանչում ու լուռ աղօթում.

Ս. Աղէկեան

Թիֆլիզ.

☆☆☆

ԱՅՍՏԵՂ ԹԷ ԱՅՆՏԵՂ.

Ամեն օր արցունք, ամեն օր զանգատ
Ու չկայ մի այլ թովիչ ճանապարհ,
Մարում է կեանքը, որ իբրեւ հէքիաթ,
Տուած է ընքուշ վայելքի համար:

Ու տառապանքի դաժան ծմեռում
Մարում են, մեռնում երազները բիւր,
Բաղդը չարախինդ ցանցեր է լարում
Կորզելու եւ կեանք, եւ ցնորք եւ բոյր:

Ներկան տանջանքի խորշակին տուած,
Զուր է՝ երազել գալիքի համար.
Դաւաճանում են ընկեր ու Աստուած
Մնում ես անզօր ու լռում յիմար:

Այն ինչ, մի ուրիշ լուսազարդ ափում
Այլ ժպիտներ կան ու սրտերը այլ
Գգւանքներով են անտեղ միշտ հարբում
Եւ կեանքը այլ է, կեանքը ոսկեփայլ:

Եւ այդ հեռաւոր կեանքին ես զերի,
Տանջվում եմ անվերջ, քաւում եմ անմեղ,
Արդեօք ո՞ւր պէտք է մահը ինձ բերի
Յաւէրժական քուն-այստե՞ղ թ՞է այնտեղ:

Համբ. Մազմանեան.

Թիֆլիզ

ԱՄԱՌԱՆՈՑՈՒՄ

Երկու ամիս ամառանոցում կիսաձանձրալի անցկացնելուց յետոյ անակնկալ այգում ծանօթացայ օր. Լուսիկին։ Մի քանի անգամ, նոյն այգում, միասին զբօսնելով (ինչպէս սովորաբար լինում է նման դէպքերում), բաւականին մօտեցանք։ Պարզուեց, որ նրա համար ևս ձանձրալի է եղել գիւղում և ցանկութիւն է ունեցել մօտենալ մէկին։ Մի խօսքով արդէն բաւականին մօտեցել էինք և անընդհատ խօսում էինք (կարծես 2 ամիս լուռ մնալու վըրէժը լուծելու համար) և այդպիսով աւելի մտերմանում։

Այժմ մեր հանդիպումը երկուսիս համար էլ մի տեսակ անհրաժեշտութիւն էր դարձել։

Առաւօտները զբօսնում էինք դաշտում, գետափում, իսկ երեկոները՝ այգում, մեր կամ Լուսիկենց պարտիզում, երբեմն էլ գնում ռօտոնդ։

Մեր ծանօթութիւնից արդէն մի ամիս էր անցել։

Յուլիսի վերջերին՝ մի շոք օր էր։ Առաւօտուանից Լուսիկին չէի հանդիպել։ Վճռեցի սպասել, հակառակ դէպքում գնալ նրա մօտ։

Արևն արդէն թէքվում էր, բայց նա դեռ չկար։ Սպասելն այլ ևս աւելորդ էր։

Գնացի։ Տանը չէր։

Իմ հարցին, թէ ո՞ւր է Լուսիկը—,տատը պատասխանեց։

—Պարտիզում։

Իսկոյն գնացի պարտէզ։

Հետաքրքրութիւնս շարժուել էր։ Ինչո՞ւ չեկաւ ինձ մօտ, ինչո՞ւ այժմ մենակ է պարտիզում, գուցէ մենակ չէ...

Ահա այդ հարցերն էին զբաղեցնում ինձ։ Սպասում էի նրան գտնել պարտիզի մի խուլ անկիւնում, որ նա շատ էր սիրում, և հանդարտ առաջ էի գնում։ Ծառերի արանքից դեռ ևս նկատվում էին հեռու հորիզոնում մարող արևի վերջին ճառագայթները։ Երբեմն-երբեմն լսվում էր թռչունների ծլվլոցը, տերևների խշշոցը, առուի քչքչոցը։ Հասել էի պարտէզի կենտրոնին, որ ամբողջովին շրջապատուած էր անոյշաբոյր ծաղիկներով։ Ո՞րքան հրաշալի են դրանք։ Անվերջ շնչում ես նրանց անուշ բոյրը, հիանում տեսքով և չես կշտանում...

Հոգեզմայլ առաջ էի գնում, երբ հեռուից նկատեցի Լուսիկին։

Նա ծաղիկներ էր հոտոտում և երբեմն էլ փնջում։ Կանգ առայ և հեռուից սկսեցի դիտել նրա դէմքը, այնտեղ կարդալ նրա

ներքինը, նրա տրամադրութիւնը։ Այդ օրը նա բաւականին գուն-նատ էր։ Ճակատին մի գիծ էր ակօսվում, որ ներքին վրդովմունքի նշան էր։

Այո՛, նրա ներքինում ինչ-որ կատարվում էր։ Երբեմն-երբեմն նա խորը ներշնչում էր ծաղկեփնջից, կարծես նրա բոյրով լցնել էր ուզում ողջ հոգին։

Նա բաւականին մօտեցել էր ինձ, բայց դեռ չէր նկատել։

Ձայն տուի։ գլուխը բարձրացրեց և զարմացած սկսեց դիտել ինձ (երևի չէր սպասում)

Նրա խորունկ, սևորակ, նշաձև աչքերը լցուած էին թախիծով։ Հանդարտ և մի տեսակ զսպուած ձայնով ասաց.

—Շնորհակալ եմ, որ եկար, անչափ ուզում էի որ գայիր, ուզում էի ինքս գալ, ուզում էի և մենակ լինել...

Կրկին հոտոտեց փունջը և մօտեցնելով ինձ, ասաց.

— Տե՛ս որքան գեղեցիկ է, հոտոտիր։

Ես կատարեցի նրա ցանկութիւնը, Դա մի թարմ, անուշաբոյր մանիշակի փունջ էր։

Լուռ էինք. բայց ես անչափ ուզում էի իմանալ նրա ներքինը։

Վերջապէս չըհամբերեցի և ասացի.

—Ինչո՞ւ այսօր ուզում էիր գալ չեկար, ինչո՞ւ ես վրդոված։ Նա լուռ էր և անընդհատ հոտոտում էր մանիշակը, կարծես ներքին վրդովմունքը պահելու համար։

Արդէն մօտեցել էինք նստարանին։ Նա կանգ առաւ և ասաց.

— Նստենք։

Նստեցինք։ Արևն արդէն դէմքը շրջել, գնացել էր իր շրջանառութիւնը կատարելու։ պարտիզում նկատվում էին գոյն զգոյն ծաղիկների գլխիկները և երբեմն էլ լսվում թռչունների ծլվըլոցը։

—Ուղիղ երկու տարի առաջ,—այսպէս սկսեց Լուսիկը իր պատմութիւնը.

—Եղբայրս, որ ուսանող էր, մի ընկերոջ հետ եկաւ մեզ մօտ։ Ընկերը մի բարձրահասակ, թխադէմ, բաւականին նիհար, խորունկ և թախծալի հայեացքով պարոն էր։ Նա լռակեաց էր և համեստ (որ պէտք է ասած հազուագիւտ է այժմեան երիտասարդների մէջ)։ Մերոնք շատ լաւ էին ընդունում նրան (երևի հէնց այդ յատկութիւնների համար). ես հետաքրքրվում էի նրանով։ Ուզում էի աւելի մօտիկից ճանաչել, տեսնել նրա ներքինը—։ Այստեղ նա կանգ առաւ խորը շնչեց, հոտոտեց ծաղկեփունջը և շարունակեց.

—Ամեն առաւօտ նրանք - եղբայրս և ընկերը-վաղ էին վեր կենում և որսի էին գնում։ Երեկոները այդի կամ ոտոնդ, բայց աւելի յաճախ՝ գետափ—լողանալու.

Ցունիսեան մի հրաշալի առաւօտ էր...

Կրկին ընդհատեց լռութիւնը Լուսիկը. կարմիր ու կատոյտ

ամպակոյտերը դեռ նոր էին ցրուել անհունում և արևի ճառագայթները նոր էին լեռների գագաթները ոսկեզօծում։

Աղբիւրից դառնալիս՝ ճամբին հանդիպեցի եղբօրս և ընկերին։ Նրանք գնում էին լուացուելու։ Դէմքերին զարմանք նկատելով, յայտնեցի որ իրենց հետ որսի եմ գնալու։ Եղբայրս ուրախացած ասաց.

—Այդ լաւ է, մեր պարոնին մի փոքր կուրախացնես։

Ժպտադէմ դարձայ Գուրգէնին (այդպէս էր նրա անունը) ասացի.

—Գիտէ իրօք կարողանամ զուարճացնել, շատ ուրախ կըլինեմ, իսկ դուք էլ պ. Գուրգէն կօգնէք ինձ, այնպէս չէ՞։

—Կաշխատեմ—եղաւ նրա պատասխանը։

—Մի տաս րոպէ անց՝ արդէն ճամբայ էինք ընկել։ Արևը ոսկեշող վարսերը սփռել չորս կողմն շոյում էր դաշտերի կանաչը և համբոյրներ դրոշմում գոյն զգոյն ծաղիկներին։ Աջ ու ձախ լեռների լանջերին մարմանդ ծփում էր ոսկէ ծովը։ Երբեմն-երբեմն երևում էին գիւղացիների զունաւոր թաշկինակով փաթաթուած գլուխները և նորից անյայտանում։ Լեռան լանջին էինք, որի յետևից սկսվում էր անտառը։ Հեռուից լսեցինք քիւրդ հովուի լօլօն, շների հաջոցը գառների մայունը։ Ո՜րքան լաւ էր։ Ամբողջ ճամբին Գուրգէնը համարեա լուռ էր, չհաշուած երբեմն-երբեմն արտասանած մի-մի նախադասութիւնը։ Սարը անցնելու վրայ էինք, երբ եղբայրս դիմեց ինձ—.

—Պաշտօնդ լաւ չես կատարում, յարգելի օրիորդ։

Ես ժպտադէմ նայեցի Գուրգէնին և ասացի.

—պ. Գուրգէնին լռութիւնն աւելի է հաճելի, քան... ուզում էի ասել ինձ հետ խօսելը, բայց նրան չվիրաւորելու համար լռեցի։

—Իզուր էք այպէս կարծում, հնչեց Գուրգէնի պատասխանը.

Կծիկի ծէրը բացուել էր—չէի ուզում կտրել, ուստի շարունակեցի

—Ձեր համառօտ նախադասութիւնը հէնց այդ է ապացուցում։ Տիրեց մի անհամ լռութիւն։ Արդէն անտառի մէջ էինք։ «Որսորդները» հրացանները վէր բերին ուսերից։ Փոքրիկ Սևիկը (եղբօրս շնիկը) ականջները խլշած սպասում էր յարձակման։ Զոյգ հրացանները պայթեցին, և Սևիկն առաջ վազեց։ Մի քանի րոպէ անց՝ ետ եկաւ փոքրիկ լորը բերանին։ Առաջին որսը եղբօրս տալով՝ գնաց երկրորդը բերելու (նա ևս գաղափար ունէր թուերից)։ Հրացանները կրկին պայթեցին և Սևիկն առաջ վազեց։ Կէս ժամ անց՝ ես գնացի մօտակայ տեսարանը դիտելու, որ բաւականին գեղեցիկ էր։ Սարի միւս երեսին բազմակերպութիւն էր տիրում։ Անտառից աջ՝ փոքրիկ լճակ էր նկատուում, ձախ՝ մարգագետինը, ետևը կանաչազարդ հարթութիւնը, իսկ առաջը՝ լեռնադաշտ։ Շուրջս բաւականին դիտելուց յետոյ՝ վերադառնայ որսորդների մօտ։ Սրանք իրենց գործը բաւականին յաջող կատարել, վերջացրել էին։ Նախ կարգի բերին իրենց, ապա՝ մաքրեցին հրացան-

ները, ուսերից կախեցին, և սկսեցին որսը գօտկատեղերից կախել։ Ես դիտում էի խեղճ թռչուններին ու մտածում.

—Խեղճեր, միայն ձեզ էի նախանձում, համարում ամենա ազատը, բայց մարդու չար ձեռքը ձեզ ևս զոհում է իր քմահաճոյքներին... Օ՜, մարդ արարած, ինչեր չես անում... Այս մտքերիս մէջ խորասուզուած՝ մի սպանուած կաքաւ ընկաւ աչքիս, որի սպիտակ կուրծքն արիւնով էր ներկուած։ Աչքերս արցունքներով լցուեցին շրթունքներս մրմնջացին...

—Անխիղճներ,

—Ի՞նչ է պատահել,—հարցրեց եղբայրս և երևի թէ աչքերիս խոնաւութիւնը նկատելով աւելացրեց.

—Այդպէս են կանացի ջղերը ..

—Գուրգէնը, որ մինչ այդ լուռ էր, հակառակեց.

—Ոչ, կանացի սրտերն իրօք քնքուշ և զգայուն են, քան մերը։

Խաւարն արդէն կամաց-կամաց պատում էր մեզ։ Ետ դարձանք։ Հեռուից մերթ նկատվում և մերթ կորչում էին գիւղի ճրագները և մէկ-մէկ լսվում էր շների հաչոցը։ Այդ գիշեր, ընթրիքից յետոյ՝ ես և Գուրգէնը բաւականին խօսեցինք և ծիծաղեցինք։ Կարծես նա այլ ևս այն Գուրգէնը չէր։ Շուտով խորին լռութիւն տիրեց սենեակում, բոլորը քնած էին։ Միայն ես քնել չէի կարողանում. նա խլել էր իմ հանգիստը—։

Այստեղ Լուսիկն ընդհատեց իր պատմութիւնը.

Պարտիզում խորին լռութիւն էր տիրում։

—Ամառանոցային կեանքն իր վախճանին էր մօտենում,-կրկին լսուեց Լուսիկի ձայնը.—Նրանց հեռանալուն մի քանի օր էր մնում։—Արդէն բաւականին մօտեցել էի Գուրգէնին, ծանօթացել էի նրա գաղափարներին, ձգտումներին։ Երեկոյ էր։ Նրանք պատրաստուեցին գետափ գնալու, իսկ ես վերցրի գիրքս և եկայ պարտէզ։ Բաւականին ընդկղմուել էի ընթերցման մէջ, երբ ոտքերի ձայն լսեցի։ Մերոնք էին։ Գնում էին գետափ։—

—Այդ ի՞նչ էք կարդում, օրիորդ, յանկարծ լսուեց Գուրգէնի ձայնը, և երբ իմացաւ, որ կարդացածս Նար-Դոսի «Մահը»-ն է, աւելացրեց.

—Կարդացէք, բաւականին հետաքրքիր է թէ գաղափարներով և թէ տիպերով...

—Եղբայրս տեսնելով մեր երկուսիս ոգևորուելը՝ դարձաւ ընկերին.

—Դէհ գնանք, բայց եթէ աւելի մեծ ցանկութիւն ունիս խօսելու, խնդրեմ, մանաւանդ որ շուտով հեռանալու ենք... Արդեօք Գուրգէնը աչքերումս կարդաց ցանկութիւնս, չգիտեմ, միայն դիմեց ինձ և ասաց.

—Եթէ միայն օր. Լուսիկը ցանկութիւն ունի խօսակցելու, կը ճամ։

—Եղբայրս մենակ գնաց։ Տիրեց մի շատ անհամ լռութիւն։ Չգիտէինք որտեղից սկսել։

—Հետաքրքիր է, որ տիպն է գրաւում Զեզ—Գուրգէնը առաջինն ընդհատեց լռութիւնը։

—Աշխէնը,—պատասխանեցի ես։

—Աշխէնը իրօք հետաքրքրական տիպ է, բայց կուզէիք նը-մանուել նրան։

Հարցը անսպասելի էր, ուստի նախ՝ մի փոքր շփոթուեցի, ապա՝ հաւաքելով ինձ՝ ասացի.

—Այո, և ոչ միայն կուզէի, այլ և փափագում եմ, եթէ միայն .. Բայց աւելի լաւ է ասացէք ինձ—Զեզ որ տիպն է դիւրագալիս և որիշն կուզէիք նմանուել։—

—Այժմ շփոթուելու հերթը նրանն էր։ Բայց հարցիս անմիջապէս հետևեց պատասխանը (կարծես նախապատրաստուած էր)։

—Հաւանում եմ Աշխէնին և ձգտում նմանուել Արմենակին։

—Ես բաւականին շիկնել էի և մի ինչ-որ ներքին վրդովմունքի մէջ էի։

—Իսկ դուք օր. Լուսիկ, կուզէիք լինել Աշխէն, եթէ միայն...

—Այո, կուզէի լինել Աշխէն, եթէ միայն դիմացինս լինի Արմենակ— վճռական, բայց մի փոքր յուզուած ձայնով ասացի ես։ Նա լուռ էր։ Կապոյտ անհունից, հեռու ափերից լուսինը հետաքրքրուած առաջ էր լողում տեսնելու և լսելու մեզ։ Կաթնագոյն լուսով ողողուած գանգուրների տակ՝ նկատեցի խօսակցիս հայեացքը, որ սովորական մեղմ թախիծի հետ մի ինչ որ քնքշանքով էր լցուած։ պարզ լսվում էր մեր սրտերի բաբախումը։ Ցանկալի նա շփեց ճակատը (կարծես ուզում էր աւելորդ մտքերն այնտեղից վանել), ոտքի կանգնեց (ըստ սովորականին ես արդէն կանգնած էի) և ձեռքն ինձ մեկնելով՝ մեղմ շշուկով ասաց.

—Լուսիկ, դու ձգտիր լինել Աշխէն, իսկ ես Արմենակ։

—Ես սղմեցի նրա ձեռքը։ Մենք երջանիկ էինք։ Լուսինը կարծես գոհացած՝ օրօր-շօրօրով շարունակեց առաջ լողալ։ Լռութիւն տիրեց։ Մի քանի օր անց՝ նրանք հեռացան այստեղից. Ստացան նամակագրութիւն։ Նախ ընկերական, ապա սպասած բնոյթը ստացաւ։ Վերջին շրջանի նամակներում՝ մեր ապագայ գործունէութեան ծրագիրն էինք կազմում. Նա մի ամիս առաջ գնալու էր փաստաբանական դիպլոմով։ Մտադիր էին գործել գիւղում կամ գաւառում. Նա՝ որպէս կաշառակեր, օրինազանց վաշխառուների ձեռքին տառապող անճար գիւղացիների պաշտպան, իսկ ես՝ տգիտութեան, խաւարի դէմ մաքառող վարժուհի։ Ա՜խ, որքան վսեմ, իդիալական էին մեր ծրագիրները...

—Ինչու էին և ոչ թէ են,—մտածեցի ես։

—Մարդս ենթադրում է, Աստուած կարգադրում,—շարունակեց Լուսիկը։—Հէնց այսօր մի նամակ ստացայ։—Նրա հայեացքը կրկին թախիծով պատեց։—Նախկին ծրագիրներս յեսաձգուեցին

եթէ միայն կարելի է այսպէս ասել) և նրանց տեղ առաջացաւ նորը—։ Գուրգէնը և եղբայրս կամաւոր են գնում... Տիրեց լռութիւն։—Իսկ ինչ կանէր Աշխէնը,—յանկարծ դիմեց ինձ Լուսիկը։

—Աշխէնը, չգիտեմ, սակայն հնթադրում եմ։

—Գթութեան քոյր,—հարցրի ես։—Այո, հէնց այդպէս, սիրելիս, հէնց այսօր վճռեցի, և ես գնում եմ գթութեան քոյր լինելու։ Ես ոտն եմ ծառի և գնում եմ պարտքս կատարելու, իսկ այժմ, սիրելիս, գնանք և մերոնց մի փոքր նախապատրաստենք. յանկարծակի բերելը լաւ չէ։

Այժմ ինձ համար պարզ էր, թէ Լուսիկն այսօր ինչու չէր եկել ինձ մօտ։

Հետևեալ օրը Լուսիկի հետ գնացինք կայարան եղբօրս և Գուրգէնին դիմաւորելու, իսկ երեք օր անց նրանց ճանապարհ դրի։ Նրանք ոտն էին ծառի և գնացին իրենց պարտքը կատարելու։ Այո, նրանք երջանիկ էին։

Նէ

*
* *

Քամի, քամի, սաւարնող
Եկ ընկեր ինձ մշտապէս
Դուն էլ ունիս նոյն ճնշող
Ցաւը կրծքում քո անտես։
Դուն էլ, ինձ պէս, փախչում ես
Այս սև գծուծ աշխարհից
Ինձ պէս, կուրծքդ բացում ես
Ծովերի դէմ, փրփրալից։
Քամի, քամի, քո գրկում
Տար ինձ հեռու մարդկանցից
Այնտեղ, ուր միայն ես ու դուն
Թռչինք, երգենք ցնծալից։

Ջան-Գիր.

ԳԱՂԹԱԿԱՆՈՒՀՈՒՆ

Մի՛ լար. քոյրիկ, առա՛ջ անցիր
Ճամբեն երկա՛ր է, անվերջ.
Առա՛ջ անցիր, մի՛ վհատիր,
Ցոյդ լինի միշտ անշէջ:

Հայի ճամբէն միշտ փշոտ է,
Մշուշապատ ու խաւար,
Բայց հոգ չէ մեզ—ահա մօտ է
Լոյսը պայծառ, փրկարար:

Տանջուած քոյրիկ, առա՛ջ անցիր,
Անցի՛ր անհոգ ու հպարտ,
Ճամբեդ փշոտ-ղու պլացիր
Որպէս արծիւ վեհ-անպարտ:

Նայի՛ր ներքեւ արիւն-ծով է,
Դիակները անհամար
Երանց շունչը պիտ քեզ տանէ
Դէպ նոր աշխարհ ոսկեվառ:

Առա՛ջ, քոյրիկ, տես արեւը
Շողշողում է կենսալից.
Արդէն մօտ է մեր պարգեւը—
Նոր արշալոյս խնդալից:

Էմիլիա Նազարեանց

Թիֆլիզ

74438

ՄԵԾ ՃԱՆՓԻՆ

Ո՜հ, ինչ երկար է այս Մեծ ճանփէն—երկար ու տատասկոտ, բայց քաղցր ու գրաւիչ...

Եւ ես գնում եմ երկար ու ոլորապտոյտ այս ճանփէն հևիհև մի՛շտ առաջ, մի՛շտ դէպի վեր...

Եւ երկար քայլելուց յոգնած, ուժասպառ նստում եմ կէս ճանփին ու նայում հեռուն...

Շուրջս ամեն ինչ այնպէս դալուկ, հոգուս պէս լուռ ու մունջ, ասես ունկդրում լինին մշուշապատ յուշերիս համբընթաց շարաններին...

Եւ մէկիկ-մէկիկ յիշողութեանս մէջ կենդանանում են այնքան հերոս դէմքեր իրենց մեծ ու տիտան իդիալներով, իրենց հսկայ երազներով, և որոնք սակայն այսօր այլ ևս հեռու են երազ կոչուելուց։

Քանի՞—քանիներն են անցել այդ դէմքերից՝ ամայի, փշերով լեփ-լեցուն այս ճանփէն՝ հևիհև, քրքթնաթոր՝ ձգտելով հասնելու այն անյայտ հեռուն, ուսկից աղօտ մի կայծ այնպէս ձըգում էր դէպի իրեն բոլոր ըմբոստ հոգիներին...

Անցել են շատ շատերը, վառվռուն երազներով ու վարդագոյն տենչերով, ձգտել հասնելու հեռուն առկայծող այն լոյսին, և սակայն ընկել պայքարի կէս ճանփին՝ մուրազը սրտներին, երգը շրթունքներին, խոր հոգոց հանելով... Եւ ընկածների անթիւ դիակներից ձորերը լեցուան, փոսերը բարձրացան ու նրանց սուրբ արեան աննդհատ ցողումից տատասկոտ ճանփին անուշ բուրմունքով վարդեր բացուեցան։

Ու այս Մեծ Ճանփի վերելքին ընկած հերոսների սուրբ ոսկորներից՝ կառուցուեց կամուրջն այն հսկայ, որով անցնում եմ այժմ հանգիստ ու անվրդով և դիմում մոլեգին հեռու հորիզոնում բոցավարուող կաս կարմիր ոսկէ Արշալոյսին...

Սար ու ձոր, ծառ ու ծաղիկ, աղբիւր ու առուակ, թռչուն ու թիթեռ, շնչաւոր անշունչ—ամեն առարկայ, ամեն արարած ալ-կարմիր են հագել, բարձր երկնակամարում շառագունած վառ արշալոյսի ոսկի շողերից...

Դա իմ նահատակ ազգի վեհ Արշալոյսն է... Վեցդարեան գերութիւնից ու ստրկութիւնից ազատագրուող Հայի Սուրբ Արշալոյսը...

Այլ ևս չկայ կաշկանդող սև խաւարը նա չքացաւ անյայտութեան աշխարհում, տեղի տալով վեհ Արշալոյսին...

Եւ մենք մօտ ենք նրան, շատ մօտ...

Վերին-Ազա. ՎԻՇՏՈՒՆԻ

***

Հոգուս մէջ բազիներ
Կառուցի քեզ համար.
Եւ ախուր գիշերներ
Խանձուեցի տենչավառ!։

Ու սիրտս ոսկեղէն
Դարձրի հուր-մոխիր,
Փռեցի քո ուղուն
Եւ ասի.—«Եկ անցիր»!.

Գիշերին տաճնջանքի
Անկողնիդ մօտ չոքած,
Ես՝ կարօտ մի ողի,
Խնդրեցի յոյզ ու կայծ!։

Սակայն դու, սակայն դու
Օ՝ չնչին սիրոյ մայր.
Չեմ սիրում էլ, հեռու՝.
Չեմ ապրում քեզ համար։

Ես սիրում եմ հոգուս
Երազները բեհէզ,
Սիրում եմ կայծ ու լոյս
Եւ այն, որ չգիտես!։

Համբ. Սազմանեան.

*
* *

ՍՏԱՆԻՍԼԱՒ ՊԸՇԻԲԻՇԵՒՍԿՈՒՑ

Թառամած ծաղիկները բոլորում են քո ճակատը, որպէս սև աբևներից հիւսուած պսակ և դէմքիդ վրայ խաղում է մարած աստղերի վիշտը։ Քո ոտների տակ մեռնում է կեանքիս փոթորիկը, իմ հոգու այդ հիւանդոտ ծնունդը, որ օղակ-օղակ յեղյեղուող ալիքների պէս պարուրում է քո գարշապարները և իմ մշուշապատ ճակատագրի խենթութիւնը իր մոխրագոյն թևերով պատում է քեզ, ով դու իմ օրօրան և շիրիմ... Իմ ծագման սև ու մռայլ մառախուղից բարձրացար դու որպէս խաւարամած երկինք և իմ էութեան փիրուն մարգարտակուռ խեցիով լողում ես դէպի խուլ ու հեռաւոր հորիզոնները, ով վշտաւոր, ամենքի վրայ թագաւորող գեղեցկութիւն, ով դու թախիծ։

Եւ ինչպէս դու իմ դամբարանը դարձար, ինչպէս քո բոցաշունչ երգերը՝ որոնցով ուրիշներին առաջնորդում ես դէպի գեղեցկի անհասանելի աշխարհը, հնչվում են իմ կրծքի տակ ագռաւների չարագուշակ կռաւոցով։ Ինչպէս կարմիր լապտերները, որոնցով լուսաւորում ես ուրիշների երջանկութեան ուղին, բոլորում են իմ մահիճը, որպէս թաղման սգաւոր մոմեր։

Իմ եղբայրների համար դու հնչուեցիր որպէս խօսքն Աստուծոյ, որ ոչնչից ստեղծեց արար-աշխարհը, դու նրանց համար Ադամի կողը եղար, որը ծածկում է իր մէջ այնքան սրբազան հրաշքներ, դու նրանց յաւիտենականութիւնն ու անսահման զօրութիւնը եղար, և միայն իմ գլխիս մէջ մխեցիր փշեայ պսակի սուր խայթոցները։

Ո՛վ դու վշտալի՜, վսե՜մ գեղեցկութիւն։

Ով դու թախի՜ծ։

Եւ սակայն բաղդերը տնօրինող գրքերում գրուած է, որ իմ հոգին լցուած քո աստուածային զօրութեամբ, կը վերածնի ամբողջ աշխարհը նոր ոյժով և նոր գեղեցկութեամբ։ Զէ՞ որ ես ու աշխարհը միևնոյն ծագումն ունենք։

Գրուած է, որ իմ հոգին կը լինի քո զօրութեան կուանը, և այդ կը լինի այն օրը, երբ կը լիանայ երկրի ծնունդին նոր հրապոյրներով, կ'ընդգրկի բոլոր աշխարհները, դուրս կը կորզի նրանց գաղտնիքները, և միջաստեղեան տարածութեան մէջ կը կախուի՝ որպէս արքայական ծիրանի, իսկ նրայ վրայ կը հանկչի քո վերածնութեան սրբազան ժեծութիւնը։

Եւ գրուած է նաև, որ դու անձնատուր իմ համբերին կը շաղկապուես ինձ հետ իմ խօսքի օղակով, և կեանք կը տաս այն հնչիւններին, որոնք իմ ձեռքի տակից դուրս կը թռչին դէպի հայ-

րենի դաշտերի արևոտ լայնարձակ հեռուները։ Եւ ոյժն ու կեանքը, որոնցով լի է գարնան յաւիտենական երկունքը, թափով կը շըրջեն իմ երակներում։

Եւ մութ սարերի թիկունքից դու պիտի ծագէիր որպէս արիւնոտ արեգակ քո նոր թագաւորութեան վրայ այլևս երբէք մայր չմտնելու համար,—չէ՞-որ քո նոր թագաւորութեան մէջ արեգակը երբէք մայր չի մտնում։

Իմ տանջանքների, իմ գեհենի գնով դու պէտք է վերածընուէիր նոր կեանքի համար—Նոր Աւետարանի համար։

Ես, ես գիտեմ այդ երգը։

Ես՝ քո փոթորիկների, քո յուսահատութեան, քո յաւիտենական խենթութեան ծնունդը։

Տո՛ւր ինձ այդ նոր երգը։

—Աւելի ուժգին, աւելի մո՛տ։

Ողողիր տիեզերքը կայծակների մռնչացող հեղեղով։ Անցիր որպէս խելագար մրրիկ, որ շպրտում է երկնքի երեսին աւազի լեռներ։ Ճայթիր որպէս Եհովայի ամպրոպ, երբ Նա Սինայի լեռից կայծակներ էր նետում։

—Ես եմ քո տէր Աստուածը։

Ես լսում եմ արդէն այդ երգի գոռ հնչիւնները որպէս կատաղի մրրիկ իմ երակների մէջ, փոթորկվում են նրա ոյժերը, ես ձգվում, բարձրանում եմ և գլուխս հասնում է երկնքին...

Ահա ալիքների դրոհը պատռում է խաւարը, ահա ազատանսահմանութեան առաջին ցոլքերը, ահա յաւիտենականութեան շունչը, ահա...

Ի զուր ամեն ինչ կորաւ։

Ինչպէս որդ՝ դու կրծեցիր իմ արքայական գահը. կրծեցիր անյագ, մինչև որ նա երերաց։ Երերաց իմ գլխի արքայական թագը, և կեսարների գահի հետ միասին դուն ընկայ ես։ Գատաւոտուն ցնցոտիներ — ահա իմ կարմիր ծիրանին։

Մեռած արևների ցուրտ փայլի մէջ մարում է քո դէմքը... ինչպէս նաև գլխիդ թառամած ծաղիկների պսակը։

Իմ անկարողութեան փխրուն և մարգրտակուր խեցիով, դու լողում ես դէպի մութ անհունը յաւիտենական ստուերների և յաւիտենական անզօրութեան։

Դո՛ւ՝ զարհուրելի. դու վսեմ գեղեցկութիւն։

Ո՛վ, դու թախիծ։

Եւ ահա նայիր, այնտեղ՝ որպէս թագաւորների թագաւոր իշխում եմ ես, ես՝ քո քաւութիւնը և քո դժոխքը։

Նայիր իմ մեծութիւնը թագաւորում է տիեզերական էութեան վրայ։ Ես՝—քո վերջին խօսքն եմ, այն խօսքը՝ որ գրում է ապագայի խաւարի մէջ հզօր ամենակարող ձեռքով Աստծոյ հրկունքից ծնուած գործը—նոր Աւետարանը, բոլոր գաղտնիքները մերկացնելու սրբազան գործը։

Ես նստած այստեղ իմ գահի վրայ, մտածում եմ, թէ ինչով

կարելի է քեզ վերածնել։

—Ես տեսնում եմ քեզ։

Դու կրում ես քո գլխին հազարաւոր մերկ շանթերից հիւսուած պսակը, հազար դարերի փոթորիկը հողմահարում է քո մազերը, անհուն յուսահատութեան կսկիծն ու երջանկութեան տենչերը ահաւոր կերպով մրրկվում են քո մէջ։

Դու խենթ ոյժերի ծիածանների մէջ ես լողում, և քո կամքը այն անպունդն է, ուր նրանք փրփրում են ու եռում։

Օ՜, տուր ինձ այն հնչիւնը, որ կարողանար ընդգրկել քո ամբողջ ոյժը։ Տուր ինձ այն ամենակարող խօսքը ստեղծագործութեան առաջին օրուայ «թող լինի»-ն, որով ես կարողանամ քեզ ամբողջապէս արտայայտել։

Տուր ինձ այն հնչիւնը և այն խօսքը, որ դուրս է շպրտում մոլորակներն իրենց ընթացքից այն հնչիւնը, որ կը փուի երկնքի մի ծայրից միւս ծայրը, որպէս հսկայական արև, որպէս ահագին բոց արևածագի հրդեհի։

Օ՜, տո՛ւր ինձ այդ խօսքը, այդ հնչիւնը։

Աւելի ուժգի՛ն աւելի մօտ. աւելի զարհուրելի՛—Հու, ո՞վ գիտէ այդ խօսքը, ո՞վ գիտէ այդ հնչիւնը։

Երուանդ Տէր-Գրիգորեան

*
* *

Ծաղկանց բոյրով,—համբոյրով
Միացանք
Զուլուեցանք
Սէր հովտում ծաղկունքով
Քո հոգին,
Իմ հոգին,
Հիւսուեցան, կապուեցան։
Մի հէքիաթ,
Սէր հէքիաթ,
Ոսկեթև, շատ թեթև
Մեր վզով
Փաթուելով
Փսփսաց կամացուկ.—
—Սիրեցէք,
Սիրեցէք,
Ապրեցէք ծաղկունքով...

Aracs.

ՀԱՄԱՌՕՏ ԱԿՆԱՐԿ ՍԵՐԲ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ*

Սերբ գրականությունը դեռ ևս ծաղկման շրջանում է գտնվում. նա ծնունդ է առել ժողովրդական պոէզիայից։ Սերբ գրականությունը սկսեց ծաղկել այն ժամանակ, երբ Սերբ մեծ գիտնական՝ կենցաղագիր ու բանասէր Վուկ Կառաճիչը հրատարակեց իր գնահատելի աշխատանքները սերբ լեզուի ուսումնասիրության վերաբերեալ։ Բացի դրանից նա լույս ընծայեց սերբ ժողովրդի գրական ստեղծագործության հարուստ յիշատակարանների հաւաքածուն։

Այդ յիշատակարաններն. ընթերցողի առաջ բաց արին ժողովրդական պոէզիայի այնպիսի գեղեցկություն, լեզուի այնպիսի ոյժ, որ նրանց հրատարակմամբ Սերբիայում միանգամից բարձրացաւ ազգային ինքնագիտակցությունը և նրանից օգտուելու ձգտումը։

ԺԹ. դարի 40-ական թուականներին Վուկ Կառաճիչի շուրջը էին հաւաքուել մի խումբ նշանաւոր երիտասարդներ, որոնք ոգևորուած էին հայրենասիրության վառ զգացումով և ամբողջովին նուիրուած գրականության վերածնման գաղափարին։ Եւ իսկապէս կարելի է ասել, որ Վուկ Ստեֆանովիչ Կառաճիչից է սկսւում Սերբ նոր գրականության վերածնությունն ու ծաղկումը։

Սերբ գրականությունը կամաց-կամաց սկսում է ազատուել սանտիմենտալ ուղղության նմանողությունից։

Մինչև Վուկ Կառաճիչը սերբիայի ինտելլիգէնտ դասը իր մայրենի լեզուին չէր վերաբերում այնպէս՝ ինչպէս պէտք էր, իսկ հեղինակներն էլ գոնւում էին իտալական պոէզիայի ազդեցության տակ։ Իտալական պոէզիայի ազդեցությունն Սերբիա էր մտել Խորվատիայի միջոցով և իր գեղեցկությամբ գրաւել թէ՝ սերբ ընթերցողներին և թէ գրականագէտներին։

Այս օտարերկրեայ գեղեցկության փոխարէն Վուկ Կառաճիչը հիմք դրեց իր հայրենի պոէզիայի գեղեցկությանը։ Վուկի ժամանակակից նշանաւոր սերբ գեղարուեստագէտները չը կարողացան անտարբեր մնալ դէպի այդ գեղեցիկ, հիանալի պոէզիան. «գրաւեց ինձ ժողովրդական ստեղծագործության իմաստությունն ու գեղեցկությունը,—ասում է այն ժամանակուայ սերբ գրականագէտներից Ստֆան Լիւբիշը,—ես ծանօթացայ մասամբ Վուկի հրատարակած ժոխովածուից, մասամբ էլ ինքս հաւաքեցի ու գրի առայ ժողովրդական երգերն ու հէքեաթները. ես այն օրից սիրեցի իմ մայրենի լեզուն այնպէս, ինչպէս առաջ ատում էի»։

ԺԹ. դարի 40-ական և 50-ական թուականների սերբ գրա-

*Օգտուել եմ Ուսովի յօդուածից։

կանութիւնը վիպական բնաւորութիւն էր կրում։ Այդ ուղղութեան ամենալաւ լիրիկ-պոէտներն էին Բրանկո Ռոտիչեվիչը եւ Ն'եկոշը, իսկ յետագայում նշանաւոր դարձաւ Զմայը։

Բրանկո Ռոտիչեվիչի նշանաւոր գրուածքն է „Дьячка растанакъ" (Раставанье товарищей)։ Այդ պոէմայում կարելի է տեսնել այն ժամանակուայ երիտասարդութեան հոգեկան ցանկութիւններն, որ գեղեցիկ կերպով նկարագրուած էր գիւղական կեանքի պատկերներով։ Բրանկոյի լեզուն շատ հիանալի է. նա նման է «մաքուր արցունքի կաթիլին»։ Բրանկոյի միւս գրուածքը —„Туть"-ը մի սատիրա էր այն ժամանակուայ թէ սերբ գրականութեան, թէ Բէլգրատի հասարակութեան և թէ վանքերի հասցէին ուղղուած։ Ն'եկոշի կլասիկ գրուածքն է „Горный Вьенацъ". այս գրուածքի վրայ են կրթուել ժողովրդական պոէտների մի ամբողջ սերունդ դա մաքուր սերբ լեզուով ու բանաստեղծական մեծ թափով գրուած մի պոէմա է։ Նրա շկոլային պատկանող պոէտների մէջ առանձնապէս ժողովրդին սիրելի էր դարձել 60 ական թուականների բանաստեղծ Զմայը, որի 70 ամեայ գործունէութեան յոբելեանը Սերբիայում մեծ շուքով տօնեցին 1899 թուին։ Նրա ազգանունն է Իովանովիչ, սակայն յայտի է „Змаі" անունով. նոյն անունովն էր կոչւում նաև Պեշտում սերբ լեզուով 1864 թուին հրատարակուող երգիծաբանական ժուռնալը։

Զմայը իր հայեացքներով ու համակրութեամբ „Омладинскій либерализмъ"-ի ուղղութեանն է պատկանում, այսինքն՝ սերբ երիտասարդութեան լիբերալիզմ» ուղղութեան։ Առանձին դգեստութեամբ նա իր հայեացքները պաշտպանում է „Милостивая Европа на гробу стрельяних комунинста" բանաստեղծութեան մէջ Զմայն ու Ն'եկոշը հանդէս են գալիս 60-ական եւ 70 ական թուականների որպէս դէմոկրատ պոէտներ։ Ն'եկոշ-ը սերբ ժողովրդական պոէտների տիպիկ ներկայացուցիչն է։

Այդ պոէտներից շատերը, ինչպէս և Ն'եկոշ-ը իսկական ժողովրդի ծնունդ են։ Նա սերբ գիւղացու զաւակ լինելով շատ էր սիրում իր հայրենի երկիրը և նրա հալածահարուած ժողովրդին։ Նա ապրում էր անկախ ու ազատ 70-ական թուականների միջավայրում, երբ կառավարութիւնը Ն'եկոշի ասելով ճգնում էր ճընշել ամեն մի ազատական շարժում, ամեն մի ազատ հայեացք և վերջապէս այն ամենը՝ ինչ կարող էր նպաստել ռէակցիոն ուղղութեան տապալման։ Երիտասարդ բանաստեղծի հակառակ հայացքները արտայայտում էին քաղաքական սատիրաներում, որ տպագրում էին „Србија"(1870 թ) օրաթերթում և „Младоj Србадија" (1871, 1872 թ. թ.) սոցիալական օրգանի մէջ, որին մասնակցում էին այն ժամանակուայ աչքի ընկնող ոյժերը՝ Կարասվելով, Ն'անկեվիչ, Կլիշին և ուրիշները։

Ինչպէս Հայնէն «երիտասարդ գերմանացի» ներկայացուցիչն էր, այնպէս էլ Ն'եկոշ-ը սերբ երիտասարդութեան ձգտումների արտայայտիչն էր։ Բացի սատիրաներից և բանասիրական յօդուածներից Ն'եկոշ ը գրել է նաև վէպեր, պատմուածքներ. այդ-

պատմուածքների, վէպերի մէջ նա մեծ գեղարուեստականութեամբ նկարագրում է այն մեծ սէրը դէպի ժողովրդական մասսան ու նրա սոցիալական ճշմարտութեան որոնումները։ Ամենալաւ վէպերից են „Поп Тихомир“ և „Сирота Баначанка“-ն։ Սակայն նրա ամենալաւ գեղարուեստական գրուածքները կազմում են նրա լիրիկ բանաստեղծութիւնները։ Այս բանաստեղծութիւնների մէջ ամենից ուժեղ և որպէս ռոմանտիկ գրող, կռուի կոչեր էր անում իր հայրենակիցներին։ Շակշիչ-ը Զմայի հետ միասին երազում էին անկախութեան մասին, և թէ ինչպէս կարելի է սերբ երկիրը միացնել և ի մի ձուլել «լեռնային գագաթներից մինչև ծովային ափերը»։ Սոցիալ և նացիոնալ իդէալները միշտ հոգի էին տալիս նրա պօէզիայի համար, այնպէս որ Շակշիչին կարելի է անուանել սերբ պօէտների վերջին անկեղծ ու տաղանդաւոր ռոմանտիկը։

Ժամանակակից սերբ գրականութիւնը 70-ական թուականներից յետոյ ընդունում է աւելի ևս ռէալ ուղղութիւն։ Այդ ուղղութեամբ աշխատել են մասնաւորապէս Կարավելովը եւ Մարկեվիչը։ Նրանք իրանց կրթութիւնը ստացել էին 60-ական թուականներին Ռուսաստանում և մնուել էին Հերցէնի, Չեռնշեւսկու եւ Դոբրոլիւբովի ազատամիտ գաղափարներով։ Նրանք սերբ ժողովրդի ու գրականութեան մէջ մտցրին ռուս ազատամիտ շարժման գաղափարներն ու ոգին, ռուս գրականութեան մերկացուցիչ գծերը։

Չնայած որ Լիւբէն Կարավելովը ազգով Բուլգարացի էր, սակայն նա շատ մօտ էր զգում իրեն երիտասարդ սերբիային և ապրելով Բելգրատում, շատ մեծ ազդեցութիւն ունեցաւ սերբ երիտասարդութեան մտքի վրայ. նրան կարելի է անուանել սոցիալական և ռէալական վէպի հիմնադիրը։

Նա բոլորովին ոչնչացրեց սերբ գրականութեան ռոմանտիզմ ուղղութիւնը։ Նա մեծ համոզմամբ կրկնում էր, որ այն ժողովուրդը, որի զգացմունքը վեր է քան բանականութիւնը, նա չի կարող յառաջադիմել։ Կարավելովը, որ շատ էր ազդուել ու տարուել այն ժամանակուայ ռուս իտէօլոգիայով, իր գրական վէճերում աշխատում էր համոզել, որ սերբ երիտասարդութիւնն ընդունի Սվէտոզուր Մարկեվիչի ծայրայեղ սոցիալ հայեացքները։

Այնուհետև սերբ գրականագէտների վրայ շատ մեծ ազդեցութիւն է ունենում ռուսաց գրականութիւնը։ Սերբ լեզուով թարգմանուած են համարեա բոլոր ռուս կլասիկները. օրինակ՝ Հերմօնտովո, Պուշկինը, Տուրգենեվո, Դոստոեւվսկին, Տոլստոյն ու Գոգոլը։

Ժամանակակից ամսագրերում կարելի է յաճախ պատահել Չեխովի, Կորոլենկոյի երկերի թարգմանութեանը։ Սերբերը լայն ծանօթութիւն ունին նաև Եւրոպական գրականութեան հետ։

Բացի եւրոպական և ռուս գրականութեան ազդեցութիւնից, սերբ գրականութեան վրայ շատ է ազդել նաև արևելքի՝ թիւրք-

-արաբական զգայուն պոէզիան, ազդել է մասնաւորապէս սիրային և դրամատիկ գրուածքների վրայ։ Պէտք է նկատել, որ սերբ գրականագէտները աշխատում են ազատուել օտար ազդէցութիւններից և ստեղծել առանձին ըէալ-հոգեբանական մի շկոլա դեմոկրատիկ սկզբունքներով։

Աչքի է ընկնում նաև սերբ գրականութեան մէջ էստետիկ հոսանքը, որ ծառայում է զուտ արտաքին գեղեցկութեանը հմայք տալուն. այդ ուղղութեան կրիտիկայի ներկայացուցիչն է Բէլկովիչը, իսկ պոէզիայի ներկայացուցիչը Ալիսլավ Ինիչը։

Ռէալ պատմուածքներ ներկայումս գրում են՝ Լազո Լազարեվիչը, Ստանկովիչը, Կաշիչը, Զիպիկո Ուսկոկովիչը, Զորովիչը, Բուտիսլաեվիչը։

Սերբիական պատմուածքները դեռ ևս նոր են, սակայն իրենց ուժով, թարմութեամբ և նացիոնալ գունաւորմամբ մեծ ուշադրութեան են արժանացել։ Սերբիական պատմուածքները մեծ մասամբ կրում են ուրախութեան, թարմութեան կնիք, սակայն կան նրանց մէջ տխուր բնաւորութեամբ գրուած պատմուածքներ էլ։ Սերբ հեղինակները ամենայն ճշտապահութեամբ նկարագրում են իրենց հայրենի գեղածիծաղ բնութիւնը, բարձրագագաթ լեռները, որոնք՝ ծածկուած խիտ ու անանցնելի անտառներով, դիւթում և հմայում են մարդուն։ Սակայն ամեն տեղ էլ ապրում է նոյն սերբ ժողովուրդը նեղուելով ու տանջուելով տնտեսական պայմաններից ու կրթութեան բացակայութիւնից։

Բացի գիւղական կեանքը նկարագրողներից կան նաև հեղինակներ, որոնք նկարագրում են քաղաքի աղմկալից կեանքը, նրա ինտելլիգենցիային։ Այդպիսի հեղինակներից նշանաւոր են՝ Սիմա Մատավուլին եւ Բոլիսլավ Ստանկովիչը։

Ստանկովիչը որպէս իսկական ըէալիստ՝ վառվռուն լեզուով, մարդկային հոգու ճիշտ անալիզով՝ հանդէս է գալիս ընթերցողի առաջ,

Պրոտիչը «գիւղական ինտելլիգենցիային» դուրս է բերում միշտ թեթև հիւմորով։

Հիւմորով է նկարագրում նաև Կոչիչը լեռնցի սերբերին։ Կոչիչը իր մեծ համբաւը ստացաւ „С планине и испод планине"* պատմուածքներով։

Այս պատմուածքները լի են թարմ կենսրուախութեամբ և մեծ գեղարուեստականութեամբ։ Այդ պատմուածքների մէջ առանձնապէս գեղեցիկ է նկարագրուած բնութիւնը։

Եթէ Կոչիչի, Ստանկովիչի, Զորովիչի պատմուածքները լի են գիւղական կեանքի գեղարուեստական նկարագրութեամբ, իսկ Զիբիկովի պատմուածքները պարունակում են իրենց մէջ գիւղական կեանքի տարրեր։ Զիբիկոն շատ նեղութիւններ է կրել կեանքի անողոք հարուածներից, դրա համար, երբ նա աւարտում է համալսարանը, թողնում է քաղաքային աղմկալից կեանքը և հեռանում իր հայրենի երկիրը, Դալմացիայի ափերը, որպէս զի

*«Планина» կոչւում է լեռնային սարահարթ։

բախտաւորութեան մասին գաղափար չունեցող ժողովրդի մօտ գտնէ իր մխիթարանին ու հանգիստը, խաբեբայութեամբ և խարտախութեամբ աչքի ընկնող քաղաքային կեանքից յետոյ։ Նա միայն մի ցանկութիւն ունէր, որ էր՝ ապրել ջերմ արեգի ճառագայթների տակ, ծովի կատաղի ալիքների ձայնը լսել, լսել թէ ինչպէս կատաղի քամին ոռնում է անտառում և բնութեան գրկից նայել կեանքի վրայ, այն կեանքի, որ լի է ցաւ ու տանջանքով և անարդարութեամբ։

Նրա գրուածքները բողոք են կեանքի անիրաւութիւնների դէմ, իրականութեան մէջ տեղի ունեցած խայտառակութիւնների դէմ։ Սակայն այդ գրուածքները լիքն են ջերմութեամբ, անկեղծութեամբ, քան Ստանկովիչի, Մատավուլի, եւ Կոչիչի գրուածքները։

Առանձին տեղ է գրաւում սերը գրականութեան մէջ Ուսկոկովիչը իր փիլիսոփայական ուղղութեամբ. Նրա պատմուածքների մէջ իրականութիւնը մնում է մեկուսի, սակայն աչքի է ընկնում դէպի կեանքը ունեցած երազ-փիլիսոփայական վերաբերմունքով։ Ուսկոկովիչի գրուածքները թէև զուրկ են իրականութիւնից, սակայն գեղարուեստական են։

Ռուս հասարակութիւնն աւելի շատ ծանօթ է Լազո Լազարովիչի, Վեսելինովիչի, եւ Կոչիչի պատմուածքներին։

Ընդհանրապէս պէտք է ասել, որ սերբ գրողները ոչ միայն նկարագրում են ժողովրդի վարքն ու բարքը, այլև նրանք թափանցում են նաև իրենց հերոսների հոգեկան բարդ աշխարհը։ Նրանք բոլորն էլ իդէալիստներ ու հայրենասէրներ են։

Ամենայն իրաւամբ կարելի է ասել, որ ոչ ոք այնպէս անկեղծութեամբ չի նկարագրել սերբ հասարակ ժողովրդի կեանքը, ոչ ոք այնպէս իսկութեամբ չի հասկացել սերբ ժողովրդի հոգեբանութիւնը և վերջապէս ոչ ոք նրա ցաւերով չի տանջուել, ինչպէս սերբ խօսքի այս երիտասարդ գեղարուեստագէտները։

ՅԱՐ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ.

ՍԱԼ-ՄԱՆ Յով. Դ Լազարեան։
1915 թ. ԹԻՖԼԻԶ.

Իւրաքանչիւր ժամանակ ունի իր պահանջները և ինտերեսները, որին բաւարարումը անհրաժեշտութիւն է ներկայանում։ Գրականութիւնն էլ որպէս իրական կեանքի հայելի, նրա բազմապիսի երևոյթների գեղարուեստօրէն պատկերացման լուսահանգոյց, շարունակ ընդառաջ է գնում նորաստեղծ կեանքի երևոյթներին արձագանքելով։

Պատերազմը որպէս մեր կեանքի ամենախոշոր ազդակ, առաջ է բերել գրականութեան բոլոր ասպարէզներումն էլ իւրատեսակ բուռն հետաքրքրութիւն և գրականական երևոյթների վրայ դրել իր խորը դրոշումը։

Ռուս մամուլը ամբողջովին գրեթէ համակուած է պատերազմով, նոյն երևոյթը նկատելի է նաև հայ կեանքում։ Մեր գրական շուկան էլ մուտք են գործել հին և նոր պատերազմներին վերաբերուող գրուածքներ։ Այդ տեսակէտից աչքի են ընկնում ժուրնալիստ Սալ-Մանի «1878 թ. Ռուս-Տաճկական պատերազմի հայազգի հերոսները» խորագիրը կրող գրքերի սերիան, նուիրած Լորիս-Մելիքեանին, Լազարեանին, Տէր-Ղուկասեանին, Շոլկովնիկեանին և Ալխազեանին, որոնց կեանքն ու կատարած քաջագործութիւններն ասպարէզ են գալիս իրենց վեհութեամբ և քաջավաստակի արիութեամբ։ Իր ժամանակին խօսել եմ «Հովիտում» Լօռիս-Մելիքեանի սերիայի առաջին գրքի մասին, այժմ, երբ հընար եղաւ կարդալ սերիայի մնացած համարները, նկատեցի, որ Սալ-Մանի կողմից մեծ սխալ է եղել, որ նա վերոյիշեալ գեներալների մասին առանձին-առանձին գրքեր է լոյս ընծայել։ Քանի որ նրանք մասնակցել են 1878 թուի Ռուս-Տաճկական պատերազմին և իրենց փառքի Դափնիները այդ պատերազմում վաստակել, այդ պատճառով էլ նրանց գործունէութեան զանազան կէտերը համախմբուում են մի ընդհանուր հանգոյցում, ուր և պատկերանում է նրանց գործունէութեան յստակութիւնը իր ամբողջ էութեամբ։

Շատ անգամ միևնոյն ճակատամարտում մի քանի հերոսների գործունէութեան միաձուլմամբ է առաջ գալիս ընդհանուր յաղթութիւնը, որ դժուար է վերագրել յատկապէս մէկին կամ միւսին։

Ուստի Սալ-Մանը շատ աւելորդ կրկնութիւններ է, անում, որով շատ հարուստ են վերոյիշեալ Սերիայի գրքերը, միևնոյն բանը կրկնելով և պատմելով սրա կամ նրա մասին միաժամանակ։

Մեր կարծիքով լաւ կլիներ, որ սերիայի չորս գրքերի նիւթը ըստ բովանդակութեան և ըստ ձևի ամփոփուած լինէր երկու գրքում, որով աւելորդաբանութիւններից զերծ կմնար։ Չնայելով վերոյիշեալ պակասութեանը, գրքերը կազմուած են խնամքով,

դասաւորութիւնը և պատերազմական գործողութիւնների յաջորդականութիւնը տեղին և կանոնաւոր են, որ մեծ դիւրութիւն է տալիս ընթերցողին ընթերցանութեան թելը չկորցնելու. գրուած են մաքուր, կանոնաւոր հայերէնով և կարուկ, յստակ ոճով։

Վերոյիշեալ ընդհանուր ակնարկից յետոյ մի քանի խօսք գեներալ Յ. Լազարեանի մասին, որին նուիրուած է սերիայի երկրորդ գիրքը։

Նրա կեանքի շատ ելևէջներում զարմանալիօրէն խտանում և պատկերանում է հայ ժողովրդի բնածին յատուկ որոշ գծերը, նա իւր կեանքով իբրև անհատ, թէպէտ օտար ասպարէզ՝ հանում է ունակութիւններ, որ ցեղային են և հատկանշական հային։

Դերձակի աշակերտ Յովհաննէսը անսալով իր ներքին ղգացմունքներին, Ղարաբաղի այդ լեգիթը զինուորական ասպարէզ է մտնում և հասարակ զինուորի աստիճանից, շնորհիւ իր բնածին տաղանդի և ձիրքերի հասնում է գեներալ ադիւտանտութեան։

Նրա հռչակը և զինորական կարիէրան ստեղծում են Դաղստանի երկարատև, յամառ կռիւներում, ուր շատ հերոսներ դրել են իրենց գլուխը, իսկ շատերն էլ բախտի ժպիտով բարձի և իշխանութեան հասել. Վերջիններից իր անմահ Լազարեանը։ Եւ ոչ միայն աչքի է ընկնում իր քաջութեամբ, խիզախութեամբ, հաստատակամութեամբ և վճռականութեամբ, այլ և որպէս հմուտ կենցաղագէտ կառավարիչ, որ ցոյց տուեց Մեխտուլինի և Դարգոյի շրջանի կառավարիչ եղած ժամանակ. նա իր բնածին տաղանդով և արևելքին մօտիկ ճանչողութեամբ շատ լաւ էր հասկանում ժողովրդի ազաթները և ըստ այնմ էլ ընթացք տալիս գործերին։

Նա քաջութեամբ կռուեց Շամիլի և Հաջի Մուրադի դէմ, հնազանդեցրեց նրանց Ռուսական հզօր լուծին և մեծ պատիւների արժանացաւ։

Բայց նրա գլուխ գործոցը եղաւ խիզախ յարձակմամբ Ղարսի առումը, որ մի փայլուն էջ է զինուորական տարեգրութեան մէջ, որ ժամանակին թէ Ռուս և թէ Եւրոպական մամուլի կողմից ըստ արժանոյն գնահատուեց. Ղարսի հերոսը իւր ոյժը ցոյց տուեց նաև Կարինում և մեծապէս օգտակար եղաւ Տաճկահայ ժողովրդին իւր տառապանքի օրերում. Նրա ջանքերով այդ ժամանակ տեղի չունեցաւ տաճկահայերի կաղթը Ռուսների գրուած այն վայրերից որ հաշտութիւնից յետոյ պիտի թողնէին։

Ապագայում պատմութիւնը անշուշտ ըստ արժանոյն գնահատելու է այդ հերոսին։

Վերջացնելով խօսքս, յանձնարարում եմ «Արշալյաց»-ի ընթերցողներին կարդալ Սալ Մանի „1878 թ. Ռուս-տաճկական պատերազմի հալ ազգի հերոսներ“ սերիայի բոլոր գրքերը և գաղափար կազմել նրանց կատարած մեծամեծ քաջագործութիւնների և զինուորական առաքինութիւնների մասին։

Պարոյր.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայրենիքիս (բանաստ.)	Գագիկ Մխիթարեան
Անցեալ յուշերից (արձակ բանաստ.)	Ժայռ
Զէ չէ նա չէր (բանաստ.)	Տ. Տ.-Յարութիւնեան
Իմ աստուածուհին (արձակ բան.)	Ն. Հայկազունի
*** (բանաստ.)	Ս. Ղալաչեան
Եկուր, հոս եկուր (արձակ բան.)	Յ. Յարութիւնեան
Ինչու ետ նայեմ (բանաստ.)	Էմիլիա Նազարեանց
Աղօթող Թամարը (պօէմ)	Ս. Աղէկեան
Այստեղ թէ այնտեղ (բանաստ.)	Համբ. Մազմանեան
Ամառանոցում (պատմուածք)	Նէ
*** (բանաստ.)	Ջան-Գիր
Գաղթականուհուն	Է. Նազարեանց
Մեծ ճանփին	Վիշտունի
*** (բանաստ.)	Հ. Մազմանեան
*** (արձակ բանաստ.)	Թարգ. Ե. Տէր-Գրիգորեանի
*** (բանաստ.)	Aracs
Համառօտ ակնարկ սերբ գրականութեան վրայ	Յ. Յարութիւնեան
Գրախօսական Սալ-Ման Յ. Դ. Լազարեան	Պարոյր

Գոստ-արկղ

Յայտարարութիւններ

ՊՈՍՏ ԱՐԿՂ

Թրֆլիզ	Գուրգէն Պօղոսեանցին։ Աշխատեցէք շատ կարդալ. „Երկու սիրահարներ՝ պատմուածքը չի տպուի։
Բագու	Աւիսին։ Չեն տպուի. ուղարկեցէք նորերը։
»	Մարեանին։ Չի տպուի. խորհուրդ կը տանք նախ քան դրելը ընթերցանութեամբ դբաղուել։
Նոր-Նախիջևան	Յ. Յարութիւնեանին։ Շնորհակալութիւն Ձեր համակրական զգացմանց արտայայտութիւնների համար։
»	Արշարունուն Չեն տպուի։ Ուղարկեցէք նորերը։
Ռոստով Դ/վ.	Գագիկ Մխիթարեանին։ Շարունակեցէք աշխատակցել։ Յայտնեցէք Ձեր հասցէն՝ ուղարկէնք «Արշալոյս»։
Ջխարա	Անտուշին։ Չեն տպուի
Բաթում	Վ. Գառեանին։ Չի կարդացուում, պարզ գրեցէք։

Կարևոր վրիպակներ

էջ	տող		տպուած է	պէտք է լինի
3	11	վերևից	արցիւնքներդ	արցունքներդ
4	11	»	խորատուզվուած	խորասուզուած
4	15	»	որքամ	որքան
4	4	ներքևից	բարձրահսակ	բարձրահ·սակ
5	1	»	արեօք	արդեօք
6	1	վերևից	աստուծուհին	աստուածուհին
7	2	ներքևից	սիրահուն	սիրուհուն
11	15	վերևից	Յուլիսի	Օգոստոսի
16	12	ներքևից	սաւարնող	սաւառնող